

ՄԱՐԳՈՒՇ ՄԻՐՈՒՄՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ մայրենիի և նրա
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
մանկ. գիտ. թեկնածու
ՀՏԴ 37.016:811.19

**ԽՈՍՔԻՄԱՍՍՑԻՆ ՏԱՐԱՐԺԵՔ ԲԱՌԵՐԻ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ**

Բանալի բառեր. ձևաբանություն, խոսքիմասային տարարժեքություն, բազմիմաստություն, երկարժեք բառեր, եռարժեք բառեր, իմաստաբանություն, հիմնական իմաստ, փոխաբերական իմաստ, խմբային համագործակցության սկզբունք:

Ключевые слова: морфология, морфологическая полисемия, многозначность, двухвалентные слова, трехвалентные слова, семантика, основное значение, метафорическое значение, принцип группового сотрудничества.

Key words. morphology, polysemy, part-of-speech polysemy, two-valency words, three-valency words, semantics, main meaning, metaphorical meaning, principle of group collaboration.

Հանրակրթության ավագ դպրոցում հայոց լեզվի ձևաբանություն բաժինն ուսումնասիրելիս անհրաժեշտություն է առաջանում խորացնելու լեզվական այնպիսի իրողության էությունը, ինչպիսին է խոսքիմասային տարարժեքությունը:

Խոսքիմասային տարարժեքություն ցուցաբերող բառերն այնպիսի լեզվական միավորներ են, որոնք իրենց իմաստային կառուցվածքով բազմիմաստ բառեր են, ձևաբանորեն բնութագրվում են խոսքիմասային տարբեր արժեքներով, շարահյուսորեն՝ բազմագործառույթ դերերով: Այլ կերպ ասած՝ այդ կարգի բառերը ձևաբանորեն երկատված լեզվական միավորներ են, որոնք գործառապես տարբերակվում են բառաբերականական իմաստով ու արժեքով¹:

Այդ իրողությունը դիտարկվում է գոյականի և հատկանշային խոսքի մասերի՝ մասնավորապես ածականի և մակբայի իմաստային կառուցվածքում. այդ խոսքի մասերը, պայմանավորված խոսքիմասային

¹ Լ. Խաչատրյան, Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., 1996, էջ 84:

մասնակի տեղաշարժերով, իրենց ձևաբանական իմաստով ու արժեքով երկփեղկված են, համատեղում են մեկից ավելի խոսքիմասային արժեքներ², հանդես են գալիս երկգործառույթ և եռագործառույթ համատեղումներով՝ ցուցաբերելով գոյական//ածական, ածական // մակբայ, գոյական//ածական // մակբայ տարարժեքություն³:

Մույն հոդվածում մենք կանդրադառնանք այն տարարժեք բառերին, որոնք բառական նշանակությամբ բազմիմաստ են, և տարարժեքություն են ցուցաբերում իրենց հիմնական և երկրորդական բառական իմաստներով: Հետևաբար, մենք լեզվական այդ միավորները դիտարկելու ենք բառաբերականական (բառաձևաբանական) իմաստների հարաբերակցության տեսանկյունից, քանի որ բառական և քերականական (ձևաբանական) իմաստները փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով և լրացնում են իրար: Մյուս կողմից՝ մենք կարևորում ենք բազմիմաստության ուսուցման շրջանակների ընդլայնումը հանրակրթական ավագ դպրոցում, քանի որ բազմիմաստ բառերի յուրացումը, բացի լեզվական գիտելիքների խորացումից, մեծապես նպաստում է նաև սովորողների կապակցված խոսքի զարգացմանը⁴:

Ա. Խոսքիմասային տարարժեքություն ունեցող բազմիմաստ գոյականներ. ուսումնասիրման մեթոդական քայլաշարը

Բազմիմաստ գոյականների խոսքիմասային արժեքը պայմանավորված է նրանց հիմնական բառական նշանակություններով, իսկ դրանց երկրորդական (փոխաբերական) նշանակություններից բխում է այդ կարգի բառերի ածականական արժեքը: Այդ բառերը ծագումնաբանորեն գոյականներ են, որոնք իրենց երկրորդական իմաստներով արտահայտում են ածականի խոսքիմասային արժեք՝ ցուցաբերելով տարարժեքություն: Այդ

² Խոսքիմասային տարարժեք բառերի ձևավորման ուղիների մասին տե՛ս Լ.Խաչատրյան, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Ե., 1985, էջ 20-26:

³ Տե՛ս Գ.Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 526: Լ.Խաչատրյան, Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., 1996, էջ 36-57:

⁴ Գ.Ավետիսյան, Բազմիմաստության ուսուցման հիմնախնդիրները հանրակրթական դպրոցում, «Մխիթար Գոշ», Գիտական հոդվածներ, Վանաձոր, 2015, 2 /43/, էջ 76-80:

կարգի բառերի տարբերակված խոսքիմասային արժեքները բաշխվում են շարահյուսական մակարդակում:

Գոյական//ածական բազմիմաստ բառերի ուսումնասիրումը՝ ըստ նրանց հիմնական (ոչ փոխաբերական) և երկրորդական (փոխաբերական) իմաստների, նպատակահարմար է կազմակերպել *խմբային համագործակցության պարապմունքի ձևով*, որն իրականացվում է ուսուցիչ-աշակերտ համատեղ գործունեության ճանապարհով: Ըստ էության, ծրագրային այս նյութն ստեղծագործական ուսումնասիրության հնարավորություն է ընձեռում:

Այս գործընթացը վարում է ուսուցիչը՝ հիմք ընդունելով՝

- աշակերտների գիտելիքներն ու կարողությունները,
- նոր ձեռք բերած տեղեկույթի առանձնահատկությունները:

Այս գործընթացն իրականացնելիս աշակերտները բաժանվում են խմբերի և ուսուցչի հանձնարարությամբ՝

- ուսումնասիրում են դասագրքում այդ թեմայի վերաբերյալ գետեղված նյութը

(եթե դասագրքում այն բացակայում է կամ ուսուցչի կարծիքով թերի է, ինքն է նյութը տրամադրում),

- խմբերն աշխատում են և հավաքած տեղեկույթի շուրջ՝ ըստ ուսուցչի տված

ալգորիթմի, այնուհետև պատրաստվում են դասարանում ներկայացնել իրենց աշխատանքի արդյունքները,

- արդյունքները վերլուծվում են, ամփոփվում և գնահատվում աշակերտների

կողմից:

Աշխատանքի այս ձևը հենց այս փուլում ենք կիրառում, որովհետև, մինչ այս նյութի ուսումնասիրումը, սովորողներն արդեն դասերի համալիրի միջոցով յուրացրել են բառերի խոսքիմասային արժեքների բաշխման և բազմիմաստության ուսումնասիրման մեթոդական շղթան, և նրանց համար արդեն դժվար չէ նման որոնողական գործունեությունն ինքնուրույն իրականացնել:

Մինչև փաստական նյութի ուսումնասիրումը, սովորողներին տեղեկացնում ենք, որ տարարժեք բառերի ածականական իմաստն ու արժեքը կարող է պայմանավորված լինել տարբեր գործոններով՝ բառի երկատված հիմնական նշանակությամբ կամ փոխաբերական իմաստավորմամբ:

Ուսումնական նյութի հիմնական ատաղձի քննարկումից հետո աշակերտներին առաջարկվում են *գոյական//ածական* ներքոբերյալ

բառազույգերը, որոնց ածականական արժեքը բառի երկատված հիմնական նշանակություններից մեկն է: Ինչպես՝

բուր – 1. բթամատ (գ.), 2. բթամիտ (ա.)

գերի – 1. ռազմագերի (գ.), 2. գերեվարված (ա.), 3. հրապուրված (ա.), 4. հլու, հնազանդ (ա.)

կուզ – 1. սապատ (գ.), 2. կուզիկ (ա.), 3. կորամեջք (ա.),

պատանի – 1. պատանյակ, երիտասարդ (գ.), 2. պատանեկան (ա.)

քառատող – 1. քառյակ, բանաստեղծության տուն (գ.), 2. չորստողյա, չորստողանոց (ա.)

մատ – 1. գինու երեսի փառ(եր), 2. մշուշ (գ.), 3. մռայլ (ա.) և այլն:

Այնուհետև առաջարկում ենք քննարկել *գոյական/ածական* հետևյալ բառաշարքը, որի շրջանակներում բառերի ածականական արժեքը պայմանավորված է դրանց *երկրորդական-փոխաբերական* իմաստներով.

բողբոջ – 1. ծառի աչքը (գ.), 2. փխբ. սերունդ, շառավիղ (գ.), 3. դեռահաս, մատաղ (ա.)

բյուրեղ – 1. բազմանիստ, կարծր մարմին (ապակի) (գ.), 2. թանկագին քար (գ.), 3. փխբ. ազնիվ, պարզ (ա.)

քար – 1. կարծր, կոպիտ զանգված (գ.), 2. փխբ. ճնշող, ծանր (ա.), 3. փխբ. դաժան, անսիրտ (ա.)

մութ – 1. մթություն (գ.), 2. մթին (ա.), 3. փխբ. գաղտնի, թաքուն (ա.)

գոհար – 1. թանկագին քար (գ.), 2. փխբ. ազնվագույնը՝ լավագույնն իր տեսակի մեջ, թանկարժեք (ա.)

բոռ – 1. վայրի մեղու (գ.), 2. փխբ. ձրիակեր (ա./գ.)

ծեռ – 1. ժայռ (գ.), 2. փխբ. վայրի (ա.), 3. անդդվելի (ա.)

լուսապսակ – 1. լուսավոր շրջանակ նկարի շուրջը (գ.), 2. փխբ. փառքով պսակված (ա.)

կորյուն – 1. առյուծի ձագ (գ.), փխբ. քաջ, կտրիճ (ա.)

հուր – 1. կրակ (գ.), 2. շողշողուն (ա.)

կույս – 1. օրիորդ (գ.), 2. (կրոն.) միանձնուհի (գ.), 3. փխբ. մաքուր, անարատ (ա.):

Այս բառախմբերի դիտարկումից հետո առաջարկում ենք ամրակայող վարժությունների հետևյալ համակարգը:

Վարժություն 1. Էդ. Աղայանի „Արդի հայերենի բացատրական բառարանից,՝ դո՛ւրս գրեք խոսքիմասային տարարժեքություն ունեցող 5-ական բազմիմաստ բառ և դրանք գործածե՛ք նախադասությունների մեջ:

Վարժություն 2. Տրված տարարժեք բառերը համապատասխան իմաստներով գործածե՛ք նախադասությունների մեջ.

Ծիրանի – 1. ծիրանենի (գ.), 2. ծիրանենու փայտից պատրաստված (ա.)

գոհար - 1. թանկագին քար (գ.), 2. փխր. ազնվագույնը՝ լավագույնն իր տեսակի մեջ (ա.):

Սովորողների համար մեկ անգամ ևս մեկնաբանում ենք, որ այդ բառաշարքերի մեջ առաջնային (նախնական) խոսքիմասային արժեքը գոյականականն է. ածականական արժեքը նրանից մակաբերված լրացուցիչ իմաստավորում է:

**Բ. Խոսքիմասային տարարժեքություն ունեցող
բազմիմաստ
ածականներ. ուսումնասիրման մեթոդական քայլաշարը**

Ուսումնական գործընթացի նախորդ փուլերում աշակերտները սովորել են, որ բազմիմաստ ածականները կարող են համատեղել խոսքիմասային տարբեր արժեքներ (գոյական/ածական, ածական/մակբայ և այլն): Հարկավոր է վերլուծական-համադրական մեթոդով աշակերտներին գիտակցել տալ, որ իմաստային այս կամ այն առումով են պայմանավորված տարարժեք բառերի խոսքիմասային արժեքները: Այդ արժեքները որոշելու աշակերտների կարողություններն ու հմտությունները պետք է ձևավորել՝ վերլուծելով այդ բառերի շարահյուսական գործառույթները:

Խոսքիմասային տարարժեքությունը ոչ միայն չի հակադրվում բառերի բազմիմաստությանը, այլև փոխկապակցված է նրան. ավելին՝ պայմանավորված է նրանով:

Աշակերտներին ներկայացնում ենք խոսքիմասային *երկարժեք և եռարժեք համատեղումներ* ցուցաբերող բառեր, որոնք ծագում են ածականի սերիչ կաղապարներից:

1. Ածական // գոյական երկարժեք բառեր

Ժամանակակից հայերենի բառային կազմում կան բազմիմաստ ածականներ, որոնք ցուցաբերում են ածական // գոյական երկարժեքություն: Սովորողներին բացատրում ենք, որ այդ կարգի բառերը ծագումնաբանորեն ածականներ են, որոնք, ժամանակի ընթացքում ենթարկվելով խոսքիմասային մասնակի տեղաշարժերի, ձևոք են բերել նաև առարկայական (գոյականական) իմաստ ու արժեք⁵: Դրանցից են՝

⁵ Ածական // գոյական տարարժեք բառերի ուսուցման մասին տե՛ս Ս. Խաչատրյան, Ածականի բառաբերականական կարգերի ուսուցումը միջին դպրոցում, Ե., 2017, էջ 111-119:

անձուկ – 1. նեղ (ած.), 2. փխբ. սահմանափակ, աղքատիկ (ած.), 3. անձկություն (գոյ.)

գոլ – 1. փոքր-ինչ տաք (ա.), 2. ջերմություն, տաքություն (գ.), 3. գոլորշի (գ.)

ինքնագիր – 1. իր ձեռքով գրված (ա.), 2. հեղինակի ձեռագիր (գ.), 3. հեղինակային մակագրություն (գ.)

ապստամբ – 1. ըմբոստ, ընդվզող (ա.), 2. անօրինականության դեմ պայքարող (գ.)

ազնվական – 1. բարձրաշխարհիկ ծագում ունեցող (ա.), 2. բարձր դասի ներկայացուցիչ (գ.)

գիտնական – 1. գիտական հայտնագործություն կատարող (ա.), 2. գիտական կոչում ունեցող (գ.)

լծակից – 1. միասին լուծ քաշող (գ./ա.), 2. փխբ. ամուսին (գ.), 3. աշխատանքային ընկեր (գ./ա.)

նշանակիր – 1. նշան(ներ) կրող (գ./ա.), 2. նշույթավոր (ա.)

ցնոր – 1. ցնորք (գ.), 2. ցնորալի, ցնորքներ կազմող (ա.)

ազնավոր – 1. ազնվական ծագում ունեցող (գ./ա.), 2. քաջ՝ ուժեղ մարդ (գ.)

ախտյան – գ./ա. 1. մրցակից, հակառակորդ, 2. չեմպիոն

ականատես – 1. գ./ա. 1. որևէ դեպքի ներկա գտնվող, 2. սոսկ դիտող (ա.)

արկածախնդիր – գ./ա. 1. բախտախնդիր, պատահականությանն ապավինող, 2. արկածներ որոնող և այլն:

Լեզվական իրողությունն ամրակայելու նպատակով աշակերտներին հանձնարարվում է կատարել հետևյալ կիրառական վարժությունները:

Վարժություն 1. –Արդի հայերենի բացատրական բառարաններից դո՛ւրս գրեք *բարետես*, *դրուժան* և *ունկնդիր* բառերի բազմիմաստ նշանակությունները: Տրված բառերն այդ իմաստնեպով գործածե՛ք նախադասությունների մեջ՝ յուրաքանչյուր բառական նշանակության դիմաց գրելով դրանց խոսքիմասային արժեքները:

Վարժություն 2. Հետևյալ տարարժեք բառերը համապատասխան իմաստով ու արժեքով գործածե՛ք նախադասությունների մեջ.

տաք – ա. 1. ջերմ, 2. փխբ. եռանդուն, 3. փխբ. կրքոտ, գ. 5. տաքություն

ծեր – 1. ծերունի, ալևոր (գ./ա.), 2. ծերացած (ա.), 3. փխբ. հին, վաղեմի (ա.)

մերձավոր – 1. ազգական (գ./ա.), 2. մտերիմ (ա.)

2. Ածական // մակբայ երկարժեք բառեր

Լեզվի տարժամանակյա կտրվածքում իմաստային ու գործառական ընդհանրության հիմքի վրա բազմաթիվ ածականներ ձեռք են բերել նաև մակբայի խոսքիմասային իմաստ ու արժեք՝ ենթարկվելով միարժեք - երկարժեք մասնակի տեղաշարժերի: Այդպիսի բառերի իմաստային ծավալներն ընդլայնվել են՝ առարկայի հատկանշային իմաստից բացի արտահայտելով գործողության հատկանիշի իմաստ: Այդ ուղիով առաջացած որոշ բազմիմաստ ածականներ արդի հայերենի բառային կազմում համատեղում են նաև մակբայի խոսքիմասային արժեք:

Որպեսզի աշակերտներն ըմբռեն այդ բառերի երկատված խոսքիմասային արժեքների էությունը, դրանք դիտարկում են խոսքի մեջ՝ շարահյուսական գործառույթների համատեքստում, ուշադրություն են դարձնում դրանց առաջնային նշանակությանը՝ ածականական իմաստին ու արժեքին⁶:

Կարելի է դիտարկել հետևյալ տարարժեք բառերը՝

բարձր – 1. բարձրաձայն (ա.), բոլորին լսելի (մ.)

լուռ – 1. անձայն (ա.), 2. առանց ձայն հանելու (մ.)

ամոթահար – 1. ամոթից շփոթված (ա.), 2. խայտառակված (ա./մ.)

կատարյալ – 1. անթերի (ա.), 2. լրիվ (ա./մ.)

համր – 1. խոսելու կարողությունից զուրկ (ա.), 2. լուռ, կամաց (ա./մ.)

սրտատրոփ – 1. անհամբեր (ա.), 2. անհամբերությամբ (մ.)

տարտամ – 1. դանդաղ (մ.), 2. երերուն, տատանվող, անորոշ (ա.),

ավել – 1. շատ (ա.) 2. ավելի, առավել (մ.),

անցավ – 1. անվիշտ, անհոգ (ա.), 2. ցավագուրկ, առանց ցավի (ա./մ.)

կանգուն – 1. հոտնկայս (ա./մ.), 2. ուղղահայաց վիճակում (մ.), 3. փխբ. չընկճված (ա./մ.)

մեղմ – 1. նուրբ, հանդարտ (ա.), 2. նրբորեն, հանդարտորեն (մ.)

կոպիտ – 1. կոշտ, ոչ նուրբ (ա.), 2. չմշակված, անփութորեն պատրաստված (ա.), 3. բիրտ, անկիրթ (ա.), 4. առանց մանրամասնությունները հաշվի առնելու (մ.)

անդուլ – 1. դադար չունեցող (ա.), 2. անդադար, մշտապես, շարունակ (մ.)

հորդ – 1. վարար (ա./մ.), 2. հորդառատ կերպով (մ.) և այլն:

⁶ Ածական // մակբայ տարարժեք բառերի ուսուցման մասին տե՛ս Ս.

Խաչատրյան, նշվ. աշխ, էջ 119-129:

Այս շարքի բոլոր բառերի ուղիղ իմաստներն աշակերտներին ծանոթ են: Աշխատանքը պետք է իրականացնել նրանց երկրորդական իմաստների բացահայտման ուղղությամբ: Այս իմաստով, ամենից արդյունավետ միջոցը նրանց գործածությունն է նախադասությունների մեջ, որտեղ բաշխվում են այդ կարգի բառերի երկատված իմաստներն ու արժեքները:

Սովորողների ձեռք բերած գիտելիքներն ամրակայելու առումով նպատակահարմար է կատարել որոնողական-ստեղծագործական վարժություններ ինչպես անհատական, այնպես էլ համադասարանային եղանակով:

Վարժություն 1. Տրված բազմիմաստ ածականները գործածե՛ք նախադասությունների մեջ՝ *ածական // մակբայ* նշանակություններով:

Համեստ, լուրջ, անլռելի, դանդաղ, խիստ, ջերմ, անտրատունջ:

Վարժություն 2. Հետևյալ տարարժեք բառերը գործածե՛ք համապատասխան խոսքիմասային նշանակություններով:

ամփոփ – 1. ի մի հավաքված, ամբողջական (ա.), 2. սեղմ, համառոտ (ա./ւ)

անբարբառ – 1. չխոսող, համր (ա.), 2. լուռ, անձայն (ա./ւ.)

անկաշկանդ – 1. առանց արգելքի (ա.), 2. սահուն (ա./ւ.)

անմոռունջ – 1. անձայն, լուռ (ա./ւ.), 2. փխբ. հլու, հնազանդ (ա./ւ.)

անշեղ – 1. չշեղվող, ուղիղ (ա.), 2. փխբ. դիպուկ (ա./ւ.):

Վարժություն 3. Նախադասության մեջ թավ գրված բառերը փոխարինե՛ք հոմանիշներով: Հոմանիշներն ընտրե՛ք ներքևում տրվածներից:

Խոր աշուն էր:

Խելագար քամին մտավ անտառ, **աստիճանաբար** ուժգնացավ, վերածվեց **փոթորկի**: Դարավոր կաղնին **ճոճվեց**, **դիմադրեց**, **ապստամբեց** **հողմի** դեմ: Սակայն ուժերն սպառվեցին, և անտառի արքան **ճռռոցով** սկսեց տապալվել ցած: **Հուսահատ** կաղնին օգնություն խնդրեց հարևան ծառերից, բայց **իզուր**:

(*Հուսաբեկ, խենթ, ապարդյուն, հետզհետե, մրրիկ, ճոնչուն, սաստկանալ, ընդդիմանալ, սպառվել, ըմբոստանալ, գահավիժել, երերալ, ուշ*):

3. Ածական //գոյական //մակբայ եռարժեք բառեր

Հայերենում կան այնպիսի բազմիմաստ բառեր, որոնք միևնույն բառույթի շրջանակներում համատեղում են խոսքիմասային երեք արժեքներ, ինչպես՝ *ածական // գոյական // մակբայ*: Սովորողներին բացատրում ենք, որ այդ կարգի բառերը սերում են ածականի

խոսքիմասային արժեքից: Լեզվի պատմական զարգացման ընթացքում ածականի հատկանշային իմաստն աստիճանաբար ներառել է թե՛ գոյականական (առարկայական) նշանակություն, թե՛ հատկանիշի հատկանիշի (մակբայական) նշանակություն, և այդ բառերը ձեռք են բերել խոսքիմասային երեք արժեքներ:

Լեզվում ածականի, գոյականի և մակբայի խոսքիմասային աղերսները հետևանք են բառերի իմաստային, ձևաբանական և շարահյուսական փոխկապակցված գործոնների⁷: Այս կարգի բառերի ուսումնասիրումը նույնպես կատարվում է շարահյուսական կիրառության շրջանակներում:

Այդպիսի տարարժեք բառերից են՝

հարուստ – 1. ունևոր (ա.), 2. մեծ կարողության տեր (գ.), 3. փխբ. անհոգ, ճոխ (մ.)

աղքատ – 1. ընչազուրկ, տնանկ (ա.), 2. ապրուստի սուղ միջոցներ ունեծող (գ.), 3. ապրուստի միջոցներից զուրկ (մ.)

թափառական – 1. վտարանդի (ա.), թափառաշրջիկ (գ.), 3. աստանդական կյանք վարելով (մ.)

որբ – 1. ծնողներից զուրկ՝ զրկված (ա./մ.), 2. ծնողներից զուրկ՝ ընկեցիկ երեխա (գ.)

հայերեն – 1. հայերենով, հայոց լեզվով (ա./մ.), 2. հայոց լեզու (գ.)⁸

պարապ – 1. դատարկ (ա.), 2. դատարկություն (գ.), 3. չգրադեցրած, ազատ թողնված (ա./մ.)

տարեկան – 1. մեկ տարում կատարվող (ա.), 2. ամեն տարի (մ.), 3. մեկ տարվա աշխատավարձ (գ.)

սուտ – 1. անհավաստի, ստահող (ա.), 2. հիմքից զուրկ, ոչ ճշմարիտ (մ.), 3. անհավաստի պատմություն (գ.)

համբ – 1. մունջ (ա.), 2. անխոս, անձայն, լուռ (ա./մ.), 3. համբ մարդ (գ.) և այլն:

Որպեսզի սովորողներն ըմբռեն տարարժեք բառերի երկատված մերձավոր իմաստները, անհարժեշտ է կատարել հետևյալ կիրառական վարժությունները:

⁷ Լ.Խաչատրյան, Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, էջ 135:

⁸ Ընդհանրապես *-արեն//երեն* ածանցներ ունեցող լեզուների անվանումները համատեղում են խոսքիմասային երեք արժեքներ: (Տե՛ս Լ.Խաչատրյան, Տեղաշարժեր..., էջ 48):

Վարժություն 1. Փակագծերում տրված բառերից ընտրե՛ք այն բազմիմաստ ածականները, որոնք ունեն փոխաբերական նշանակություն, և տեղադրե՛ք նախադասության մեջ:

Բնակատեղին հետզհետե ընկղմվեց (սև, գիշերային, ամենակույ)
խավարի մեջ:

Ձորի վրա ծիծեռնակի (կիսաքանդ, տխուր, թափուր) բույնն էր կախվել աանպաշտպան:

Անտրտունջ է (բարձր, դալար, լալկան) ուռին՝ կանգնած առվի եզրին:

Վարժություն 2. Հետևյալ բառերը գործածե՛ք նախադասությունների մեջ խոսքիմասային՝ *գոյական// ածական// մակբայ* արժեքներով.
խմաստուն, ռուսերեն, սուր, աղքատ, ագահ:

Այսպիսով, խոսքիմասային տարարժեքությունը պայմանավորված է տարբեր գործոններով, որոնցից կարևորվում է բառույթի հիմնական (ոչ փոխաբերական) և երկրորդական (փոխաբերական) իմաստների առկայությունը միևնույն բառի իմաստային կառուցվածքում: Այդ ուղիով խոսքիմասային տարարժեքություն են դրսևորում գոյական և ածական անունները՝ հանդես գալով երկարժեք և եռարժեք համատեղումներով: Այդ կարգի բառերի ուսուցումը հետապնդում ոչ միայն ձևաբանական, այլև իմաստաբանական գիտելիքների ամրապնդման և խորացման նպատակ. լեզվական իրողությունները (տարարժեքություն և բազմիմաստություն) ուսուցանվում են փոխկապակցված ձևով՝ ելնելով այն հանգամանքից, որ լեզվական միավորները միմյանցից մեկուսի գոյություն չունեն և խոսքային միջավայրում (շարահյուսական մակարդակում) հանդես են գալիս հարաբերակցված ձևով՝ լրացնելով միմյանց:

Լեզվական միավորների ուսուցման խմբային համագործակցության մեթոդը սովորողների համար մեկ անգամ ևս հաստատում է այն իրողությունը, որ լեզվի մակարդակների միավորները գտնվում են փոխլրացական հարաբերությունների մեջ:

Մ.Միրումյան

**Խոսքիմասային տարարժեք բառերի բազմիմաստ
նշանակությունների ուսուցումն ավագ դպրոցում
Ամփոփում**

Հանրակրթության ավագ դպրոցում խոսքիմասային տարարժեք բառերն ուսումնասիրելիս ի հայտ են գալիս այնպիսի միավորներ, որոնց

տարարժեքությունը պայմանավորված է հիմնական և երկրորդական բառիմաստների հարաբերակցության հանգամանքով:

Հայերենում մի շարք բազմիմաստ գոյական և ածական անուններ այդ սկզբունքով համատեղում են երկարժեք (գոյական//ածական.- *գերի, պատանի, բյուրեղ*, ածական//մակբայ.- *կատարյալ, բարձր, տարտամ*) և եռարժեք (գոյական//ածական//մակբայ.- *պարապ, համր, տարեկան*) նշանակություններ:

Այդ կարգի բառերի ուսուցումը կարող է խորացնել և ամրապնդել սովորողների ձեռք բերած գիտելիքները ձևաբանության և իմաստաբանության բնագավառներից:

Առաջարկվում է տարարժեք բառերի բազմիմաստ նշանակությունների ուսուցումն իրականացնել խմբային համագործակցության եղանակով:

М.Мирумян

**Обучение лексической многозначности
морфологически полисемичных слов в старшей школе
Резюме**

В общеобразовательной старшей школе при обучении морфологически полисемичных слов выделяется ряд единиц, в рамках которых морфологическая полисемия обусловлена соотношением основного и второстепенного значения слов.

В современном армянском языке ряд многозначных существительных и прилагательных совмещает, по этой причине, морфологическую двухвалентность [сущ.//прил. – *գերի, պատանի, բյուրեղ* и т.д., прил.//нареч. – *կատարյալ, բարձր, տարտամ* и т.д.] и трехвалентность [сущ.//прил.//нареч. – *պարապ, համր, տարեկան* и т.д.].

Обучение языковых единиц такого типа поможет углублять и укреплять знания учащихся в сферах семантики и морфологии.

Предлагается принцип группового сотрудничества для обучения лексической многозначности морфологически полисемичных слов.

M. Mirumyan

**Teaching Lexically Polysemy of Part-of-Speech Polysemantic Words
at High School
Summary**

In the process of investigating words with part-of-speech polysemy at high school of general education, come forward such units the morphological polysemy

of which is conditioned with the fact of the correlation of main and secondary word-meanings.

According to this principle in Armenian a number of polysemantic nouns and adjectives comprise two-valency (noun//adjective- *զերի, պատանի, բյուրեղ*, adjective//adverb- *կատարյալ, բարձր, տարտամ*) and three-valency (noun//adjective//adverb- *պարսպ, հաւր, տարեկան*) meanings.

Teaching those kind of words can deepen and fasten the knowledge that the learners gained within the scopes of morphology and semantics.

It is suggested to carry out the teaching lexically polysemy of morphological polysemantic words by means collaborative work in groups.